ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032,
tandzut.armavir@mta.gov.am, tandzutigyuxapetaran@mail.ru

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

12 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 37

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 10-րդ կետով

Կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝ /Մ.Միքայելյան/ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 5 օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին :

3. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել ավագանու անդամներ Տիգրան Սարգսյանին, Սարգիս Գրիգորյանին /համաձայնությամբ /:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

2019թ.
գ.Տանձուտ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի N 37 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ

ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ -ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ԱՆԴԱՄՆԵՐ՝

Փ.ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ

Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՐԾԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐ

Հ. ՄԻՆԱՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՏՆՕՐԵՆ

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Գ.Խուրշուդյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am,
tandzutigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 112-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N 1 Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով , <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի երրորդ մասով և 34-րդ հոդվածով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրվարի 18-ի <<Հայաստանի Հանարապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին>>N1-Ա որոշման հավելվածների մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) Որոշմամբ հաստատված N2 հավելվածում՝<<Իրավունքներ և պարտականություններ>>բաժինը լրացնել նոր <<ժդ>>ենթակետով ,համաձայն հավելվածի :

2) Որոշմամբ հաստատված N3 հավելվածում՝<<Իրավունքներ և պարտականություններ>>բաժինը լրացնել նոր <<իա>>,<<ծբ>>,<<ծգ>> ենթակետերով:

3)Որոշմամբ հաստատված N6 հավելվածում՝<<Իրավունքներ և պարտականություններ>>բաժինը լրացնել նոր <<ժա>>ենթակետով ,համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

2019 թ.
գ.Տանձուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am,
tandzutigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 111

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԻ ՍՏԱՆՁՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 6 հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության թիվ 15 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2019 թվականի հոկտեմբերի 4-ի N 18-Ա որոշումը

որոշում եմ

1.2019 թվականի նոյեմբերի 12-ից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ղեկավարի լիազորությունները ստանձնում է՝ Մխիթար Այվազի Պետրոսյանը:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ.
գ.Տանձուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am,
tandzutigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 110

ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով ՝ Վաչագան Պետրոսյանի և Եկատերինա Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 0.68 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի փաստացի չափը կազմում է 0.7030 հա: Հողամասին կից ավել զբաղեցրած 0.023 հա հողը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, չի խախտում անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Վաչագան Պետրոսյանի 2019թ. նոյեմբերի 11-ի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Օրինական հողամասին կից ավել զբաղեցրած 0.023հա հողը սեփականության իրավունքով նհատույց տրամադրել Վաչագան Պետրոսյանի և Եկատերինա Պետրոսյանին ՝ծածկագիր 04-092-0065-0002:

2. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ համապատասխան ստորաբաժանմանը գրանցել Վաչագան Բորիսի Պետրոսյանին ծնված 1960 թվականին և Եկատերինա Նիկոլայի Պետրոսյանին ծնված 1965 թվականին , սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողի նկատմամբ տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

2019 թ.
գ.Տանձուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am,
tandzutigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 109

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառվարման մասին >>Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009 թվականի 1066-Ն որոշման 7-րդ կետով և հիմք ընդունելով հողասեփականատերերի դիմումները

Որոշում եմ՝

1.Գյուղատնտեսական ցածրարժեք հողատեսքերն ավելի բարձրարժեք հողատեսքերի փոխադրել՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

2019թ.
գ.Տանձուտ

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի

ղեկավարի 2019թվականի նոյեմբերի 4-ի

թիվ 109 որոշման

Երեմ	Սուքյասյան	04-092-055-010	0.5412 հա	վ/հ	սալորենի	2019թ.	գարնանը
Հայկ	Սեդրակյան	04-092-055-003	0.3հա	վ/հ	ծիրան	2019թ.	գարնանը